

Լ Ր Ա Ց Ո Ւ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՍԵՍԻԱՆԵՐԸ  
ՆՎԻՐՎԱՄ ՇՈՎՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՈՒՑԻԱՅԻ  
ՅՕ-ՍՄՅՍԿԻՆ

Տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ գիտությունների Ազգային Մանուկ Աբեղյանի անվան Դրականության ինստիտուտի 5-րդ գիտական սեսիան:

Սեսիայի առաջին նիստում լուսաստրական գիտությունների թեկնածու էդ. Քոփլյանը զեկուցեց «Սովետական գրականության համաշխարհային նշանակությունը» թեմայի մասին: Զեկուցողը նշեց, որ Սովետական գրականության համաշխարհային նշանակությունը պայմանավորված է Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեուլուցիայի համաշխարհային նշանակությամբ:

Այն պահին, երբ բուրժուական քննադատական ռեալիզմը ապրում էր իր անկումը, ուսական գրականության առաջավոր վարպետներն իրենց ստեղծագործություններում զարգացրին առաջադիմական դեմոկրատական տրադիցիաներ: Պուշկինի, Բելինսկու, Զերնիշևսկու, Տոլստոյի, Զեխովի ստեղծագործությունները նոր որակ էին համաշխարհային առաջավոր գրականության մեջ:

Մարքսիզմի կյասիկները երազում էին սոցիալիստական Դանտի մասին, այդ երազանքը կենսագործվեց Ռուսաստանում, Մարքսի Գորկու ստեղծագործությունների միջոցով:

Սովետական գրականությունը անմիջական ժառանգել է ուս խոշոր մտածողների ստեղծած այդ գրականության:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեուլուցիան ստեղծեց իսկական ռեալիստական արվեստի զարգացման բոլոր նախադրյալները: Զտեսնված չափով անեց ու աճում է Սովետական գրականությունը, որը նոր որակ է գեղարվեստական մտքի պատմության մեջ և հենված է բուլշևիզմի մեծ իղեաների վրա:

Միայն Սովետական գրականությանը վիճակվեց առաջին անգամ ճամարտացիորեն վերարտադրել աշխատավոր ժողովրդի պատմական գերը սոցիալիստական հասարակակարգի կառուցման տիտանային գործում, բուլշևիկների պարտիայի ղեկավարությամբ:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեուլուցիայից հետո համաշխարհային գրական բոլոր առաջավոր երևույթները ստեղծվել են սովետական գրականության առաջավոր իղեաների բարերար ազդեցությամբ:

Մարքսի Գորկու, Վ. Մայակովսկու, Եուլիսովի, Ֆադեևի, Ալ. Տոլստոյի ազդեցությունը խոշոր է համաշխարհային գրականության ու արվեստի վրա: Այժմ ուսական գրականությունն է, որ որպես լուսատու փարոս առաջնորդում է միլիոնավոր մասսաներին դեպի նրանց երազած ապագան: Բուրժուական անկում ապրող գրականության օրհասի պայմաններում աճում և զարգանում է սովետական գաղափարական բարձրարվեստ գրականությունը:

Սեսիայի նույն նիստում պրոֆեսոր Հովիկ Մելիքյանը զեկուցեց «Սովետական յայրենասիրությունը սովետահայ գրականության մեջ» թեմայով:

Ընկեր Մելիքյանն իր զեկուցման առաջին մասում լուսարանեց հայ կյասիկ գրականության արտահայտած հայրենասիրական գաղափարները, անցյալի մեր գրողների ազնիվ երազանքները հարազատ ժողովրդի ազատության ու երջանկության մասին, երազանքներ, որոնց կենսագործումը անհնարին էր ֆեոդալիզմի և կապիտալիզմի տիրապետության պայմաններում:

Սրանով ի պայմանավորված էր այդ գրողների, ասենք Խորենացու և Նդիշի, Արովյանի և Թումանյանի հայրենասիրության սահմանափակվածությունը:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեուլուցիան, ինիին և Ստալինի ղեկավարությամբ, վերջ տվեց շահագործող դասակարգերի տիրապետությանը, հաստատեց Սովետական կարգեր,

երկրի ղեկը, իշխանությունը և հարստությունը տվեց աշխատավոր ժողովրդին: Սովետական ժողովուրդները, որոնց թվում և դարավոր գերությունից ազատված հայ ժողովուրդը զարժան իրենց ազատ հայրենիքի տերը, ստացան խաղաղություն և ազգային վերածնության լայն ներավորություններ: Հայ ժողովրդին բախտ վիճակվեց լինելու երկրաշնչի վրա առաջին սոցիալիստական պետության, անդասակարգ հասարակության կառուցողներից մեկը: Սովետական ժողովուրդների մեծ բնտանիքում հայ ժողովրդի ազգային շահերը ամրոգջապես զուգակցվեցին եղբայրական ժողովուրդների ազգային շահերին: Խուս մեծ ժողովրդի գլխավորությամբ սովետական ժողովուրդները իր կյանքի կառուցման գործում փայլուն հաղթանակների հասան:

Պատմական այս մեծ ղեկավարի արտահայտությունն է սովետական հայրենասիրությունը: Լենինը և Ստալինը հենց սկզբից սովորեցրին ազատագրված ժողովուրդներին՝ արյան ղեղձ պաշտպանել սոցիալիստական հայրենիքը, ամեն ինչ նվիրել հայրենիքի վերելքին և շինարարությանը, քաջ գիտակցելով, որ առանց ազատ ու անկախ սովետական հայրենիքի չդա կյանք ու ապագա:

Լենինի և Ստալինի պարտիայի գլխավորությամբ սովետական ժողովուրդները հաղթանակ տարան քաղաքացիական կռիվներում, սոցիալիզմի կառուցման մարտերում, Հայրենական Պատերազմի ռազմաճակատներում, միշտ հավատարիմ մնալով սոցիալիստական հայրենիքի պաշտպանության վեհ գաղափարին:

Ահա հայրենասիրական պատմական այս գաղափարներն էին, որ ոգեշնչեցին սովետական զորքներին՝ ղեկավարված սովետական ստեղծագործությունների և իր դարագլուխ բացեցին մեր գրականության պատմության մեջ:

Սովետահայ բոլոր գրողները՝ Ավետիս Իսահակյանը, Գ. Գեմիրճյանը, Ստ. Զորյանը, Արազին, Ն. Զարյանը, Կ. Սարյանը, Սիրասը, Հր. Փոշարը, Կ. Բորյանը, Շիրազը, Սարմենը, Թ. Հուրյանը, Ա. Գրաչին, Վ. Գրիգորյանը, Ս. Տարոնցին և ուրիշ շատերը իրենց ստեղծագործություններում արտահայտում են սովետական հայրենասիրության այդ վեհ գաղափարները:

Սեփայի հաջորդ նիստում բանասիրական գիտությունների թեկնածու Արամ Ղանայանյանը ղեկուցեց «Սովետահայ ժողովրդական բանահյուսությունը» թեմայի շուրջը:

Ընկ. Ղանայանյանը նշեց, որ սովետահայ ժողովրդական բանահյուսությունը հայ ժողովրդի ներհոգեմտության շրջանի հողնոր ստեղծագործության յուրահատուկ և ինքնուրույն թնազավառներից մեկն է, ավանդական բանահյուսության զարգացման ճորձ փուլը, որն այժմ ապրում է ժանրային խմորման հետաքրքրական մի պրոցես: Ընկ. կողմից նկատելի է բանահյուսական մի քանի հին տեսակների (թովչական ասմունքներ, կրոնական երգեր և այլն), մահացման կամ կերպարանափոխման երևույթը, մյուս կողմից՝ դրանց մի մասի (ժողովրդական երգ, հերոսապատում, առած) կենսունակությունը:

Սովետահայ ժողովրդական բանահյուսությունը հայ ժողովրդի վերջին երեք տասնամյակների կյանքի ու պայքարի փառական-բանաստեղծական բանավոր տարեգրությունն է: Նրա մեջ բաղմաղան ու տարրեր ձևերով գրոշմված են այդ կյանքի ու պայքարի կարևոր դրվագները (քաղաքացիական կռիվներ, սովետական կարգերի հաղթանակը, տնտեսական և կուլտուրական շինարարություն, գյուղի կոլեկտիվացում, ինքնագաղ և այլն):

Սովետահայ ժողովրդական բանահյուսության գլխավոր հերոսները՝ Լենինը, ու Ստալինը են իրենց գիտակցներով: Նրանք հանդես են գալիս իրենց Սովետական Միության ժողովուրդների նվիրական հույզելի ու մտորումների արտահայտիչները, հայ ժողովրդի ազատարարները, նրա ազգային վերածննդի հիմնադիրները: Լենինի և Ստալինի մասին հայ ժողովրդի հորինած բազմաթիվ բանահյուսական ստեղծագործությունների շարքում առաջնակարգ տեղ է դրավում «Լենին հսկա» նազը, որը թե՛ իր ժպերային առանձնահատկություններով և թե՛ իղեկական բովանդակությամբ բանահյուսական ինքնուրույն ուրակի մի ստեղծագործություն է: Ժամանակակից հայ ժողովրդական բանահյուսության մեջ առաջ եկած հերոսական ասքի կամ ժողովրդական պոեմի նյայտուն նմուշը: Այդ երկը աչքի է ընկնում իր՝ քաղաքական նպատակասլացությամբ, պատմական իրականության հարազատ վերարտադրությամբ, էպիկական լայն դիապազով, ֆուլյուրային ունակությամբ և սեռուցիտիս ոգմանտիկայի ղեղեցիկ ներդաշնակությամբ, դարմանալի էմոցիոնալ ուժով՝ և մեծ դիմամեկայով:

Սովետահայ ժողովրդական բանահյուսության մեջ առանձին ու կարևոր տեղ են զրավում Հայրենական Պատերազմի շրջանի ստեղծագործությունները, որոնց հիմնական թևան ռազմաճակատում տեղի ունեցած պատմական խոշորագույն իրադարձություններն են, իսկ գլխավոր հերոսը՝ սպանի գալտում Ավետական Միության մյուս ազգությունների զավակների

հետ ընդհանուր, թշնամու դեմ մարտնչող, վերջնական հաղթանակի նկատմամբ վառ հավատով տողորված հայ զինվորն ու հրամանատարը:

Սովետահայ ժողովրդական բանահյուսության հիմնական ու հական առանձնահատկությունը ձևով ազդային և բովանդակությամբ սոցիալիստական ստեղծագործությունն լինելու հանդամանքն է: Իր այդ առանձնահատկությամբ սովետահայ ժողովրդական բանահյուսությունը պարտական է Հոկտեմբերյան Մեծ Ռեոլուցիային և սրա հարազատ ծնունդ սովետական կարգերին, որոնք նոր բարձր ու առաջավոր իդեաններ ու իդեալներ հաղորդելով ավանդական հայ բանահյուսությանը, միաժամանակ լայն հնարավորություններ ստեղծեցին զարգացնելու վերջինիս ազդային ձևի յավազույն հատկությունները:

Նույն նիստում բանասիրական գիտությունների թեկնածու ընկ. Սուրեն Հարությունյանը զեկուցեց «Սովետահայ դրամատուրգիայի զարգացման ուղիները» թեմայով: Ընկեր Հարությունյանը բնութագրեց սովետահայ դրամատուրգիայի զարգացման հիմնական շրջանները. խոսեց այն թերությունների մասին, որոնք տեղ են գտել մեր դրամատուրգիայի մեջ, և կանգ առավ հատկապես այն արժեքների վրա, որ ստեղծել է սովետահայ դրամատուրգիան անցած տասնամյակների ընթացքում:

Գ. Դեմիրճյանը, Ն. Զարյանը, Լ. Գուլակյանը, Վ. Վաղարշյանը, Մելիք Քոչարյանը և ուրիշներ իրենց մի շարք հաջողված գործերով կարողացել են ստեղծել ինչպես մեր անցյալի պատմությունը վեր հանող, այնպես էլ ժամանակակից նոր, սովետական կյանքը բազմակողմանիորեն արտացոլող յավազույն գործեր:

Ն. Յա. Մառի անվան լեզվի ինստիտուտի 4-րդ գիտական սեկիայում «Լեզվաբանական գիտության զարգացումը Սովետական Հայաստանում» թեմայի մասին զեկուցեց բանասիրական գիտությունների թեկնածու ընկ. Ս. Ղազարյանը:

Զեկուցողը բացահայտելով հնդեվրոպական լեզվաբանության «նախամայր» լեզվի իդեալական, բուրժուական և լուծյուն, կանգ առավ այն խոշոր աշխատանքի վրա, որ կատարել է Ն. Յա. Մառի հնդեվրոպայական և քննադատության լեզվաբանում, հիմնադրելով նոր, մատերիալիստական, մարքսիստական լեզվաբանությունը: Մառի նոր ուսմունքի նվաճումները «զտագործելով» նրա աշակերտներին՝ սովետահայ անվանի գիտնական, Հայկական ՍՍԻ Գիտությունների Լեզվաբանության ինստիտուտի անդամ Է. Ղափանցյանն իր բազմաթիվ աշխատություններով խոշորագույն ծառայություններ է մատուցել հայագիտությանը, ցույց տալով, որ հայոց լեզվի ձևավորումը պետք է կապել ոչ թե հնդեվրոպական համարվող լեզուների հետ, այլ պետք է բացատրել տեղական, փոքրասիական և կովկասյան հին լեզուների հետ ունեցած ճրա ընդհանրություններով, այսինքն հայոց լեզվի ձևավորման օջախը պետք է փնտրել նրա ընդհանրությանը, և ոչ հայրենիքից դուրս:

Հնդեվրոպաբանության սխալ և վնասակար պաղափարների դեմ տեական պայքար է մղում Հայկական ՍՍԻ Գիտությունների Լեզվաբանության թղթակից անդամ Լ. Ղարիբյանը, որն իր տասնյակ աշխատություններում գիտականորեն հիմնավորել է Մառի դրույթները հայոց լեզվի ծագման ու ձևավորման մասին և լացահայտել է հնդեվրոպաբանության իդեալիստական, հակագիտական և լուծյունը:

Ժամանակակից հայոց լեզվի ուսումնասիրության բնագավառում խոշոր աշխատանք է կատարել դոցենտ Գ. Սեակը. նրա և ընկ. Լ. Ղարիբյանի բերականության դասադրերը, որոնք արժանացել են բազմաթիվ տպագրությունների, հանդիսանում են սովետահայ դպրոցի կայուն դասագրքերը:

Ընկ. Ս. Ղազարյանը կանգ առնելով սովետահայ լեզվի աննախընթաց զարգացման վրա, նշեց այդ գործում ուսական լեզվի բարեբար և տեական ազդեցության նշանակությունը:

Ինչպես զեկուցողը, այնպես էլ զեկուցման առթիվ ելույթ ունեցող ընկ. Լ. Ղարիբյանը ընդգծեցին, որ դեռևս յրիվ չափով սրմատախիլ չեն արված հնդեվրոպական լեզվաբանության հետքերը ոչ միայն լեզվաբանական գիտության, այլև պատմագիտության բնագավառում, Սրոշ լեզվաբաններ, որոնց մեջ նույնիսկ նոր կադրեր, իրենց հետազոտություններում գերադնահատում են բուրժուական լեզվաբաններին, չափազանցում նրանց ծառայությունները հայագիտությանը:

Պայքարը, հանուն սովետահայ լեզվի գիտական ուսումնասիրման և հնդեվրոպաբանության մերկացման, շարունակվելու է ավելի ակտիվ կերպով:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆ. Է. Լեզյանը զեկուցեց «Սովետահայ գրական լեզուն սրպես հայ ժողովրդի համազգային լեզուն» թեմայով:

Զեկուցողը նշեց, որ Հայաստանում Սովետական իշխանության հաստատումից հետո, Սովետական կարգերի օրոք հայոց լեզուն զարգացման թևն կարճ, բայց փառավոր ուղի է անցել՝ ձեռք բերելով փայլուն նվաճումներ: Լեյզ նվաճումներից առաջինն այն է, որ նա դարձել է Սովետական Հայաստանի պետական լեզու, մի բան, որ հնարավոր է դարձել միայն Հայաստանում սովետական պետություն ստեղծելու հետևանքով: Երկրորդ՝ սովետահայ լեզուն ստացել է ամենամեծ ժողովրդականություն, այդ լեզվով են խոսում մեր ռեսպուբլիկայի ողջ մասսաները՝ ինտելիգենտները, բանվորները, կոլխոզնիկները: Մամուլի, դպրոցի, դրականության, թատրոնի, ուղիորդի միջոցով մեր լեզուն հասնում է աշխատավոր մասսաներին: Պատճառն է նրանց սեփականությունը և ասպարեզից դուրս մզում բարբառները: Երրորդ՝ սովետահայ լեզուն հարստանալով դիտական ճոխ տերմինոլոգիայով, դարձել է սովետական առաջավոր գիտության ու տեխնիկայի բոլոր նրբություններն արտահայտող լեզու: Լեյս ասպարեզում խոշոր դեր է կատարել ողու լեզուն՝ իր քարերար ազդեցությունը: Զորքորդ՝ մեր լեզուն բովանդակության մայրն էր հասակարդային երկատվածություն լուծելի: Իրրև սոցիալիստական անդամակարգ հասարակության լեզու, նա ունի միանույն սոցիալիստական բովանդակությունը՝ ազգային ձևով:

Եվ վերջապես, այս բոլորի շնորհիվ մեր՝ սովետահայ լեզուն այսօր արդեն հանդես է գալիս իրրև հայ ժողովրդի համազգային լեզու և դառնում է միավորվող հայ ժողովրդի բոլոր հատվածների սեփականությունը:

Քանասիրական գիտությունների թեկնածու Լև. Մուրվայանը զեկուցեց «Հայ-վրացական լեզվական ընդհանրություններ» թեմայի մասին: Զեկուցողը բազմաթիվ հետաքրքրական օրինակներով ցույց տվեց, թե ինչպիսի ընդհանրություններ կան հայերեն և վրացերեն լեզուներում, ընդհանրություններ, որոնց մեծ մասը ուշադրության չի առնվել հայոց լեզվի ձևավորման հարցերով զբաղվող գիտնականների կողմից:

Հայոց և վրաց լեզուների ընդհանրությունները, որոնք հասնում են մոտ երեք հազար միավորի, դրսևորվում են մի կողմից բառերով, բառարմատներով ու մասնիկներով և մյուս կողմից լեզվամտածողական ընդհանուր ձևերով ու միջոցներով: Լեյզ ընդհանրությունները բաժանված են ռսո ծալման երկու մասի: Լեյաջին մասը դալիս է հնագույն ժամանակներից, երբ հայոց և վրաց լեզուները դեռևս կազմավորման պրոցեսում էին և հանդես չէին գալիս որպես կազմակերպված լեզուներ: Երկրորդ մասը վերաբնում է ավելի հետագա շրջանի, երբ հայոց և վրաց լեզուները հանդես են գալիս արդեն որպես կազմավորված լեզուներ և կուլտուր-տնտեսական (ու բաղաբական) հարաբերությունների մեջ են մտնում մյուս հարևան, նմանապես կազմավորված լեզուների հետ:

Հայոց և վրաց լեզուների կազմավորման պրոցեսում առաջացած այս ընդհանրությունները արդյունք են իրենց նախորդող բազմաթիվ (այժմ արդեն մեռած) լեզուների ամենամոտ շփումների, ներթափանցումների ու խաչավորումների: Նրանք այդ ժամանակաբեթացում իրենց մեջ խաչավորել են այս երկու լեզուներից մի շարք բառեր ու այլ լեզվատարրեր (մանավանդ մասնիկներ), որոնց մի մասը հաջողվում է պարզել մեծ մասամբ խեթական ու խուսիտական արձանագրությունների հիման վրա: Լեյզ ժամանակն ընկնում է մեր թվականություններից մոտ 2000—1500 տարի առաջ, երբ հայոց և վրաց նախահայրերը երկարատև շփումների ու խաչավորումների պրոցեսում են եղել և հիմք են դրել հայոց և վրաց լեզուների կազմավորմանը՝ նախորդ բազմաթիվ լեզուների ներթափանցումների ու խաչավորումների ուղիով:

Քանասիրական գիտությունների թեկնածու Վ. Լևաբեյանը սեփայում զեկուցեց «Մարքսիզմի կլասիկները լեզվական ոճի մասին» թեմայով: Զեկուցողը ցույց տվեց, թե մարքսիզմի կլասիկները, Մարքսը, Էնգելսը, Լենինը և Ստալինը ինչպես են շնահատել լեզվական ոճը, լեզվի դերը հասարակական կյանքում:

Մարքսիզմի կլասիկների այդ ընդդրումները լեզվի մասին, որոնք հանդիսանում են նոր, մատերիալիստական լեզվաբանության հիմքը, բացահայտում են լեզուների առաջացման և զարգացման օրինաչափությունները, պետք է ուղենիշ հանդիսանան ինչպես բոլոր լեզուների, այնպես էլ սովետահայ լեզվի ուսումնասիրման համար:

Իր զեկուցման եզրափակել մասում, խոսելով լեզվական ոճի առանձնահատկությունների մասին, զեկուցողը հիշեցրեց Մ. Ի. Կալինինի հետևյալ բնութագրումը.

«Եթե մեկը ինձ հարցնի, ով է ամենից լավ իմանում ուսերենը, ես կպատասխանեմ ինչպես Ստալինը, որովհետև նրա լեզուն պարզ է, ամենին հասկանալի, ճկուն և խորիմաստ»:

Քանասիրական գիտությունների թեկնածու Լևնա Մովսիսյանը զեկուցեց «Մարքս հայերեն

լեզվի մասին թեմայի շուրջը Լնկ. Մովսիսյանը համառոտ շարադրեց հայագիտության բնագավառում Մառի կատարած խոշոր ծառայությունները և հայոց լեզվի մասին մեծ լեզվաբանի ունեցած հայացքները, որոնք սերտ կերպով կապված են լեզվի նոր տեսության զարգացման ընդհանուր ընթացքի հետ, ենթարկվել են այնպիսի վերակառուցման ու փոփոխությունների, ինչպես Մառի հարեթական տեսությունը։ Ըստ այնմ էլ այդ տեսությունը պետք է քննության առնել, բաժանելով երկու հիմնական շրջանի՝ մինչև 1924 թիվը, և 1924 թվից հետո, երբ ստեղծվեց լեզվի նոր ուսմունքը։

Մառի առաջին շրջանի, այսինքն՝ մինչև 1924 թիվը դրած աշխատություններում հայոց լեզուն գիտվում է որպես հնդեվրոպական և հարեթական լեզուների հիբրիդային խաչաձևման հետևանքով առաջացած մի լեզու, որտեղ պահպանված են հարեթական լեզուների արմատական շերտերը։

Մառը բացահայտել է հայոց լեզվի ազդակցությունը կովկասյան մի շարք հարեթական լեզուների հետ։

Մառը ընդունում է Հայաստանում գոյություն ունեցող երկու տարբեր տիպոլոգիական լեզուներ, բացահայտում է այդ լեզուների մեջ պահպանված հարեթական տարրերը, վերլուծում հայկական տոհմանունները և որոշում հայոց լեզվի խաչաձևման կետերը։

Մառը երկրորդ շրջանի իր աշխատություններում վերանայել է հայոց լեզվի մասին ունեցած իր հայացքները, հայոց լեզուն համարել է հարեթական զարգացման ստադիայից հնդեվրոպականի անցնող մի լեզու, որն իր մեջ պարունակում է անցած փուլերի մնացուկները։

Սենսայի վերջին նիստում Վն. Զարյանի «Հացավան» վեպի լեզուն թեմայի մասին գեկուցեց բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Գրիգորյանը։

Զեկուցողը ցույց տվեց, որ Ն. Զարյանը հիմնականում ճիշտ կիրառվում էր կոլտոգային գյուղացիության լեզվական և ոճական առանձնահատկությունները, «Հացավան» վեպում կարողացել է հասնել լեզվական լուրջ նվաճումների։ Ն. Զարյանի լեզուն պարզ է, բուրրին հասկանալի, աչքի է ընկնում իր սեղմությամբ, կոնկրետությամբ։ Նա նկարագրությունների մեջ զուսպ է, նրա նկարագրությունները գեղեցիկ են ու հմայիչ։

Նա միապաղաղ պատմող չէ. համապատասխան ստեղծված իրադրությանը, հերոսների ներքին աշխարհին ու մտքերին, հմտորեն կարողանում է փոփոխել իր պատմելաձևը, ավելի բնորոշ ու հետաքրքրական դարձնել այն։ Ունի գեղեցիկ պատկերներ ու համեմատություններ, խոսուն է պիտեսներ, թեկվոր արտահայտություններ, խորիմաստ բնորոշումներ և աֆորիզմներ։

